ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՁԱԴՐԱՆՔ

մեդիա եւ տեղեկատվական գրագիտության ոլորտում փորձագիտական ծառայությունների մատուցման վերաբերյալ

Բովանդակություն

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

Մեր մասին 3

Ծրագրի նպատակը 4

2. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԾԱՎԱԼԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՁԵՎԸ 4

Ծրագրի բաղադրիչները 4

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՐՋԱՆԱԿԸ 6

4. ԱՆՀՐԱԺԵՇՏ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ 8

5. ՊԱՀԱՆՁՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ 8

6. ՏԵՒՈՂՈՒԹՅՈՒՆ 9

7. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 9

8. ԴԻՄԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 10

Հավելված 1. Գործողությունների ժամանակացույց 11

Հավելված 2. ՔՀԿ-ների համար առաջարկվող կարողությունների զարգացման խտացված ծրագրի ուսումնական պլան/մոդուլ 13

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

մեդիա եւ տեղեկատվական գրագիտության ոլորտում փորձագիտական ծառայությունների մատուցման վերաբերյալ

Տեխնիկական առջադրանքի նպատակ	Մեդիա եւ տեղեկատվական գրագիտության (ՄՏԳ) փորձագետի ներգրավում՝ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) համար կարողությունների զարգացման ծրագրի իրականացման նպատակով
Ծրագրի անվանում	Մեդիագրագիտության բարձրացում՝ Հայաստանի քաղաքացիական հասարակության դերակատարների միջոցով
Իրականացնող կազմակերպություն	«Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ի հայաստանյան ներկայացուցչություն
Դոնոր	Չեխիայի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն. Transition Promotion ծրագիր
Առաջադրանքի ժամկետը	2024 թ. հունիս – 2025 թ. հոկտեմբեր
Թիրախ վայր	ՀՀ, Լոռու մարզ
Ծրագրի ուղղակի թիրախային խմբեր	Գրանցված քաղաքացիական հասարակության կազմակերպություններ, որոնք 2-5 տարի գործունեություն են ծավալում ՀՀ Լոռու մարզում
Վերջնական շահառուներ (լայն թիրախային խումբ)	1. Լոռու մարզի բնակչությունը՝ թիրախավորելով մարզաբնակ երիտասարդներին (16-29 տարեկան) և կանանց 2. ՀՀ այլ վայրերում բնակվող անձինք

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մեր մասին

«Մարդը կարիքի մեջ» հասարակական կազմակերպության հայաստանյան ներկայացուցչությունը շահույթ չհետապնդող կազմակերպություն է, որը հետևում է մարդասիրության, ազատության, հավասարության և համերաշխության սկզբունքներին: Մենք աշխատում ենք հումանիտար օգնության, մարդու իրավունքների, կրթության և սոցիալական աշխատանքի ոլորտներում:

Հատուկ ուշադրություն դարձնելով քաղաքացիական հասարակությանն ու ներառական կառավարմանը՝ մենք աջակցում ենք քաղաքացիական հասարակությանը պետական կառույցների հետ համագործակցության՝ մասնակցային ժողովրդավարական գործընթացները խթանելու և ներառական հանրային ծառայությունները զարգացնելու համար:

Ծրագրի նպատակը

«Մեդիագրագիտության բարձրացում՝ Հայաստանի քաղաքացիական հասարակության դերակատարների միջոցով» ծրագրի նպատակն է նպաստել ավելի դիմակայուն, լավ տեղեկացված և քննադատաբար մտածող հասարակության ձևավորմանը Հայաստանում:
Ծրագիրն ուղղված է քաղաքացիական հասարակության մեդիակոմպետենտության բարձրացմանը՝ հանգեցնելով մեդիատեղեկույթը սպառողի անաչառ հակազդեցությանը լրատվամիջոցների կողմից տարածվող ապատեղեկատվությանը և վնասակար քարոզչական շահարկումներին: Ծրագրի շրջանակում իրականացվող գործողությունները կխթանեն հանրության լայն շրջանում մեդիագրագիտության, քննադատական մտածողության և վերլուծության մակարդակի բարձրացմանը, կօգնեն տարբերակել փաստահեն տեղեկատվությունը մոլորեցնող բովանդակությունից՝ հակագործելով հանրային համախմբվածությունը խաթարող գործողություններին:

2. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԾԱՎԱԼԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՁԵՎԸ

Ծրագրի բաղադրիչները

Ծրագրի վերջնարդյունքին հասնելու համար իրականացվելու է երկու փոխկապակցված բաղադրիչ: Ծրագրի հայտաձևի նախապայմանների համաձայն՝ ՔՀԿ-ները միաժամանակ դիմելու են ծրագրի երկու փուլերի համար: Երկրորդ փուլի համար կդիտարկվեն միայն առաջին փուլին մասնակցող և հաջողություն գրանցած կազմակերպությունները:

Ծրագրի հիմնական բաղադրիչներն են.

Բաղադրիչ 1. *ՀՀ Լոռու մարզում գործող 5 ՔՀԿ-ների (յուրաքանչյուրից երկուական ներկայացուցիչ) մեդիա և տեղեկատվական գրագիտության կարողությունների զարգացում և հզորացում:*

Կարիքների վրա հիմնված մեդիագրագիտության կարողությունների զարգացման ծրագրի նպատակն է նոր մոտեցումների կիրառմամբ բարելավել ՀՀ Լոռու մարզում գործող 5 ՔՀԿ-ներիապատեղեկատվության, քարոզչության և դավադրության տեսությունները բացահայտելու գիտելիքներն ու հմտությունները: Մասնակիցները կսովորեն քննադատաբար գնահատել տեղեկատվական աղբյուրները, ստուգել փաստերը և տարբերակել այն բոլոր նյութերը (այդ թվում՝ տեսա-լսողական), որոնք տարածում են ապակողմնորոշիչ կամ մանիպուլյատիվ տեղեկատվություն:
Աշխատարանի արդյունքում կմշակվեն նախաձեռնողական գաղափարներ՝ ուղղված տվյալ համայնքի հասարակության դիմակայունության ամրապնդմանն ապատեղեկատվական արշավների և կեղծ խոսույթների դեմ՝ ապահովելով առավել հեռավոր և դժվար հասանելի վայրերում բնակվող երիտասարդների և կանանց ներառողականությունը: Գաղափարները կգնահատվեն հատուկ ստեղծված ընտրական հանձնաժողովի կողմից և, համաձայն սահմանված չափորոշիչների, լավագույնները կընտրվեն ծրագրի երկրորդ փուլին մասնակցելու համար:

Բաղադրիչ 2. *Մրցույթի արդյունքում երկրորդ փուլ անցած 3 ՔՀԿ-ներին կտրամադրվի ենթադրամաշնորհներ մեդիագրագիտության բարձրացման գաղափարներն իրագործելու համար:*

ՔՀԿ-ների կողմից իրականացվելիք նախաձեռնությունները նպատակաուղղված են ՀՀ Լոռու մարզաբնակ առնվազն 180 երիտասարդների, կանանց և ընդհանուր բնակչության մեդիագրագիտության հմտությունների զարգացմանն ու ամրապնդմանը՝ «Մեկ աշխարհ դպրոցներում» (One World in Schools - OWIS) նորարական մոտեցման կիրառմամբ:

<u>OWIS մեթոդաբանության</u> հիմքում ընկած են աուդիո-վիզուալ նյութերի, հիմնականում վավերագրական ֆիլմերի ցուցադրումը և դրան հետևող՝ բաց քննարկումը, որը թույլ է տալիս բացահայտ խոսել հուզող խնդիրների կամ իրավիճակների մասին: Պատմության և աուդիո-վիզուալ փորձի համադրությունն օգնում է հանդիսատեսին կապվել գլխավոր հերոսի և ներկայացված խնդրի հետ ավելի զգացմունքային և էմպաթիկ մակարդակով, ինչը հանգեցնում է խնդիրների ավելի խորը ըմբռնմանը:

OWIS մեթոդաբանությունը. «Մեկ աշխարհ դպրոցներում» /One World in Schools (OWIS) նախաձեռնությունը «Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ի մոտեցումն է՝ միտված ակտիվ քաղաքացիների հաջորդ սերունդներին կրթելուն, ովքեր մտածում են քննադատորեն, հարգում են մարդու իրավունքները և գործում են կարեկցանքով և ինքնագիտակցությամբ:
Այս ուսուցման մեթոդաբանությունը նորարարական է, որը մշակվել է Չեխիայում 2001 թվականին:
Այդ ժամանակից ի վեր այն ներդրվել է ֆորմալ և ոչ ֆորմալ ուսուցման միջավայրերում աշխարհի ավելի քան 14 երկրներում: Մեթոդաբանության հիմքում դրված է վավերագրական ֆիլմերի ցուցադրման սկզբունքը, ինչի շնորհիվ ներկայացվում են մարդու իրավունքների, ժողովրդավարական սկզբունքների, կլիմայի փոփոխության, մեդիատեղեկատվական գրագիտության և այլ կարևոր խնդիրները: Ցուցադրվող ֆիլմերը հիմք են հանդիսանում հետագա քննարկումների, վարժությունների և զգացմունքային արտացոլման համար, որոնք նպաստում են կարեկցանքի, քննադատական մտածողության և ինքնագթասրտության զարգացմանը: OWIS-ն ավելին է, քան ֆիլմերը. այն ինտեգրված մոտեցում է, որը ներառում է մի շարք գործողություններ լսարանից դուրս՝ երիտասարդների կողմից ղեկավարվող նախաձեռնություններ, երիտասարդական առաջնորդների/լրագրության մրցույթներ, ուսանողական ընտրություններ, անարդարության պատմություններ և շատ ավելին:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՐՋԱՆԱԿԸ

Ծրագրում սահմանված նպատակների և առաջադրանքների պատշաճ իրագործման գործընթացն ապահովելու նպատակով ներգրավելու ենք մեդիա և տեղեկատվական գրագիտության փորձագետ՝ ընտրված ՔՀԿ-ների ներկայացուցիչների հետ համապատասխան աշխատանքներն իրականացնելու համար:

Փորձագետն իրականացնելու է հետևյալ աշխատանքները.

1. Կազմակերպել 2,5-օրյա դեմ առ դեմ ինտերակտիվ կարողությունների զարգացման դասընթաց՝ նախապես ընտրված 5 ՔՀԿ-ների համար «Մեդիա և տեղեկատվական գրագիտության կոմպետենցիաները» թեմայով:

*Դասընթացի համար առաջարկվող նախնական ուսումնական պլանը ներկայացված է **Հավելված 2-ում:** Այն կարող է ճշգրտվել/փոփոխվել փորձագետի հետ քննարկումների արդյունքում: Դասընթացին կմասնակցեն նաև այլ հրավիրված փորձագետներ, որոնք կուղղորդեն մասնակիցների նախաձեռնությունների մշակումը OWIS մեթոդաբնության սկզբունքների ու գործիքների ներառմամբ:*

2. Աջակցել 3 վեբինարների կազմակերպմանը՝ օրակարգերի մշակման, բանախոսների ներգրավման, ինչպես նաև միջոցառման վերաբերյալ տեղեկատվության ակտիվ տարածման

հարցում: Առցանց հանդիպումներին ակնկալվում է տեղական և միջազգային անկախ ԶԼՄ-ների, հետազոտողների և ոլորտային առաջատար կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցության ապահովումը՝ ոլորտի արդի հարցերը քննարկելու համար:

3. Իրականացնել մենթորինգի և/կամ քոուչինգի ծառայություններ ծրագրի շրջանակում դրամաշնորհ ստացած 3 ՔՀԿ-ների համար՝ գաղափարների մշակման և դրանց արդյունավետ իրագործման նպատակով: Մասնակիցներին կմատուցվի 3-5 առցանց անհատական խորհրդատվություն, մասնավորապես ուսումնամեթոդական նյութերի, ինտերակտիվ գործիքների, առցանց հարթակների և այլ հետաքրքրող հարցերի վերաբերյալ:

4. Համակարգել ՔՀԿ-ների նախաձեռնությունների համապատասխանեցումը ծրագրով սահմանված գնահատման ցուցիչներին՝ ապահովելով մասնակիցների հետ մշտական հետադարձ կապը հնարավոր թերություններն ու բացերը վերացնելու համար: Ծրագրի շրջանակում «Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ի փորձագետների կողմից կկազմակերպվի 1-օրյա դասընթաց մասնակիցների համար, որի ընթացքում կներկայացվեն իրականացվող նախաձեռնությունների մշտադիտարկման և գնահատման առաձնահատկությունները:

5. Կազմակերպել 1,5-օրյա դասընթաց/աշխատաժողով 3 ՔՀԿ-ների համար՝ իրենց մեդիատեղեկատվական նախաձեռնությունների արդյունքներին, փորձի փոխանակմանը և հետագա քայլերի իրականացման համար ապացույցների վրա հիմնված գաղափարների մշակմանն անդրադառնալու համար:

6. Աջակցել ծրագրի ամփոփիչ միջոցառման կազմակերպմանը՝ ծրագրի արդյունքներն ու հաջողված փորձը ներկայացնելու, ինչպես նաև համայնքի և քաղաքացիական հասարակության դիմակայունության բարելավման գործընթացները քննարկելու նպատակով:

7. Համագործակցել «Մարդը կարիքի մեջ» ՀԿ աշխատակիցների և այլ շահագրգիռ կողմերի հետ՝ ապահովելով ծրագրային գործողությունների կատարումը սույն տեխնիկական առաջադրանքով սահմանված պահանջների և ժամանակացույցի համաձայն: Առաջարկել և քննարկել ծրագրի թիմի հետ հրավիրյալ բանախոսների և փորձագետների հնարավոր մասնակցությունը կազմակերպվելիք վեբինարներին և դասընթացներին:

8. Ծրագրի շրջանակում կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունները (էլեկտրոնային եղանակով) ներկայացնել սույն տեխնիկական առաջադրանքում նշված ժամկետների համաձայն **(Հավելված 1)՝** հիմնվելով մասնակիցների

գիտելիքների նախնական և հետագա գնահատման արդյունքների և այլ դիտարկումների վրա:

4. ԱՆՀՐԱԺԵՇՏ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Բարձրագույն կրթություն մեդիահաղորդակցության, կրթության կամ հարակից ոլորտում:
- Փորձ մեդիա և տեղեկատվական գրագիտության ուսուցման ոլորտում՝ երիտասարդների և մեծահասակների համար տեսական և գործնական մոտեցումների կիրառմամբ:
- Փորձ կարողությունների զարգացման ծրագրերի կազմակերպման և իրականացման համար, նախընտրելի է քաղաքացիական հասարակության զարգացման համատեքստում՝ դեմ առ դեմ (offline) և հեռավար ձևաչափերով (online):
- Քոուչինգի, մենթորական կամ անհատական խորհրդատվության տրամադրման փորձը կդիտվի որպես առավելություն:
- Կազմակերպչական, ներկայացման, կապերի հաստատման և հաղորդակցման հմտությունների առկայություն:
- Հայաստանյան մեդիա դաշտի լավ իմացություն՝ տեղական համատեքստի և մարտահրավերների տեսանկյունից:
- Առաջադրանքներն ու պարտականությունները սահմանված ժամկետներում կատարելու կարողություն:
- Հայերենի և անգլերենի վարժ տիրապետում՝գրավոր և բանավոր:

5. ՊԱՀԱՆՋՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Հետաքրքրված անձինք կարող են ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

- Մանրամասն ինքնակենսագրական (CV)՝ թեկնածուի որակավորման ու փորձի նկարագրով:

- Ուղեկցող նամակ, որը ներկայացնում է թեկնածուի փորձը մեդիա և տեղեկատվական գրագիտության ոլորտում, ինչպես նաև վերջինիս հասանելիության պատրաստակամությունը մինչև 18 ամիս ժամկետով՝ ներառյալ ժամանակ առ ժամանակ ՀՀ Լոռու մարզ ուղևորություններ՝ ուսուցանելու և մասնակիցների գործունեությունը մշտադիտարկելու համար:

- 2 կոնտակտային անձի տվյալներ, որոնք կարող են հաստատել նախկինում կազմակերպված նմանատիպ դասընթացների և/կամ իրականացված ծրագրերի փորձը:
- Դասընթացի մոդուլի ձևանմուշ վերը նշված թեմաների շուրջ:

6. ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ

Մեդիագրագիտության փորձագետը ներգրավվածությունը 18-ամսյա ծրագրի տևողությամբ է՝ ըստ սահմանված ժամկետների **(Հավելված 1):**

7. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Փորձագետը հաշվետու է ծրագրի ղեկավարին, ինչպես նաև սերտորեն աշխատելու է կազմակերպության անդամների և ծրագրում ներգրավված այլ գործընկերների հետ:

Փորձագետը պատասխանատու է ծրագրի (գրավոր կամ բանավոր) հաշվետվությունների տրամադրման համար՝ ծրագրի շրջանակում գործողությունների կատարման վերաբերյալ:

Փորձագետը պետք է ներկայացնի.

- վերանայված մանրամասն ուսումնական թեմատիկ և գործնական վարժությունների պլան (մոդուլ)՝ ներառելով OWIS մեթոդաբանության մասը (հայերեն),
- ուսումնամեթոդական նյութեր (սահիկաշար (PPT), տպագիր և/կամ էլեկտրոնային նյութեր) ներկայացվող թեմաների վերաբերյալ,
- մասնակիցների գրանցման թերթիկ և միջոցառումների ընթացքում արված լուսանկարներ/տեսանյութեր,
- մասնակիցների նախնական և հետագա գնահատման լրացված թերթիկնե,ր
- կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություններ (ըստ պահանջարկի) և վերջնական հաշվետվություն՝ հայերեն կամ անգլերեն, ինչպես էլեկտրոնային, այնպես էլ տպագիր տարբերակով (ներառյալ մոտեցումների նկարագրությունը և աշխատանքի մեթոդաբանությունը):

Այս հաշվետվությունները ներառելու են դիտարկումներ և գնահատումներ կարողությունների զարգացման ծրագրերի իրականացման, վերապատրաստման դասընթացների, խորհրդատվությունների և հարակից այլ միջոցառումների վերաբերյալ: Փորձագետը պետք է ներկայացնի վերապատրաստման դասընթացների արդյունավետությունը, մասնակից ՔՀԿ-

ների առաջընթացը, առաջ եկած մարտահրավերները և բարելավման առաջարկությունները: Բացի այդ, հաշվետվություններում ներառվելու են մոնիթորինգի և գնահատման գործողությունների արդյունքները՝ ներառյալ ՔՀԿ-ների կողմից նոր հմտությունների կիրառումը և իրականացվող նախաձեռնությունների ազդեցությունը թիրախային լսարանի վրա: Այս հաշվետվությունները կարևոր նշանակություն ունեն ծրագրի գնահատման, նպատակներին հասնելու, առաջընթացի, մոնիթորինգի և ապագա ծրագրի պլանավորման ու որոշումների կայացման համար:

8. ԴԻՄԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Հետաքրքրված թեկնածուներին խնդրում ենք մինչև վերջնաժամկետը ուղարկել ինքնակենսագրականը (CV) (ոչ ավելի, քան 2 էջ), ուղեկցող նամակը և դասընթացի մոդուլային ձևանմուշը հետևյալ էլ. հասցեով. **procurement.armenia@peopleinneed.net**՝ հաղորդակցության թեմայի տողում նշելով «Մեդիագրագիտության բարձրացում՝ Հայաստանի քաղաքացիական հասարակության դերակատարների միջոցով»:

Դիմելու վերջնաժամկետը ս.թ. հունիսի 28-ն է:

Բոլոր որակավորված դիմորդները, անկախ սեռից եւ տարիքից, կարող են դիմել:

Հավելված 1. Գործողությունների ժամանակացույց

N	Սահմանված առաջադրանք	Ծառայությունների մատուցման ժամկետը
1.	Իրականացնել 2,5-օրյա դեմ առ դեմ ինտերակտիվ դասընթաց/աշխատաժողով ՔՀԿ-ների համար, ներառյալ անհատական խորհրդատվություններ յուրաքանչյուր ՔՀԿ-ի հետ՝ իրենց կողմից մշակված մեդիագրագիտության նախաձեռնությունների վերաբերյալ:	Սեպտեմբեր, 2024թ.
2.	Իրականացնել մենթորինգի և/կամ քոուչինգի ծառայություններ ծրագրի շրջանակում դրամաշնորհ ստացած յուրաքանչյուր 3 ՔՀԿ-ների համար, այդ թվում՝ 3-5 առցանց խորհրդատվություն տարբեր խնդրահարույց հարցերի դեպքում՝ ըստ անհրաժեշտության:	Նոյեմբեր-դեկտեմբեր, 2024-2025թթ.
3.	Աջակցել և նպաստել երեք վեբինարների կազմակերպմանը	Սեպտեմբեր-հոկտեմբեր, 2024 թ. (1-ին տարի)
4.	Համակարգել ՔՀԿ-ների նախաձեռնությունների համապատասխանեցումը ծրագրով սահմանված գնահատման ցուցիչներին	Հուլիս-օգոստոս, 2025 թ.
5.	Կազմակերպել 1,5-օրյա դասընթաց/աշխատաժողով 3 ՔՀԿ-ների համար՝ իրենց մեդիատեղեկատվական նախաձեռնությունների արդյունքներին, փորձի փոխանակմանը և հետագա քայլերի իրականացման համար ապացույցների վրա հիմնված գաղափարների մշակման ն անդրադառնալու համար:	Սեպտեմբեր, 2025 թ.
6.	Համագործակցել «Մարդը կարիքի մեջ» ՀԿ աշխատակիցների և այլ շահագրգիռ կողմերի հետ:	Ծրագրի ողջ ընթացքում
7.	Նպաստել ծրագրի շրջանակում կատարված ընթացիկ աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունների մշակմանը, մասնակիցների նախնական և հետագա գնահատմանը՝ տրամադրելով դրանց վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը:	Ծրագրի ողջ ընթացքում

8.	Վերջնական հաշվետվությունը օգտագործված մեթոդաբանության նկարագրի հետ միասին ներկայացնել ծրագրի թիմին	Հոկտեմբեր, 2025թ.

Հավելված 2. ՔՀԿ-ների համար առաջարկվող կարողությունների զարգացման խտացված ծրագրի ուսումնական պլան/մոդուլ

Դասընթացի նպատակները.

1. ՔՀԿ-ներին զինել մեդիագրագիտության վերաբերյալ համապարփակ գիտելիքներով:
2. Խթանել ՔՀԿ-ների համայնքակենտրոն նախաձեռնողականությունը՝ ՀՀ Լոռու մարզի երիտասարդների և մեծահասակների մեդիագրագիտության բարձրացման նպատակով:
3. Զարգացնել քննադատական մտածողությունն ու վերլուծական հմտությունները՝ Հայաստանում ապատեղեկատվության և քարոզչության դեմ պայքարում:

Դասընթացի կառուցվածքը.

Տեւողությունը՝ 2,5 օր
Մասնակիցներ՝ նախապես ընտրված 5 քաղաքացիական հասարակության կազմակերպություններ (ՔՀԿ)
Մեթոդաբանություն՝ Ինտերակտիվ դասալսումներ, խմբային քննարկումներ, գործնական վարժություններ, դեպքերի ուսումնասիրություն և գաղափարների/ծրագրերի մշակում:

Միջոցառման օրը	**Թեմա (մոտ. տեւողությունը)**
Օր 1. **Մեդիագրագիտության հիմունքներ** **Մաս 1**	1. Բացում և ներկայացում (30 րոպե) ➢ Ողջույնի խոսք, աշխատաժողովի նպատակները ➢ Մասնակիցների ներկայացում 2. Տեղեկատվական և մեդիագրագիտության կոմպետենցիաներ (1 ժամ) ➢ Սահմանում և կարևորություն

	➢ Հիմնական մեդիակոմպետենցիաներ. հասանելիություն, վերլուծություն, գնահատում և ստեղծում 3. Մեդիա դաշտը և տեղեկատվական աղբյուրները (1 ժամ) ➢ ԶԼՄ-ների տեսակները և դրանց դերը ➢ Տեղեկատվության աղբյուրների արժանահավատության գնահատում
Մաս 2	4. Խոսքի ազատությունը և դրա սահմանները (1 ժամ) ➢ Իրավական շրջանակներ և էթիկական նկատառումներ ➢ Խոսքի ազատության մարտահրավերների վերաբերյալ դեպքերի ուսումնասիրություն 5. Անձնական տվյալների պաշտպանություն և անվտանգություն թվային միջավայրում (1 ժամ) ➢ Թվային գաղտնիության լավագույն փորձը ➢ Անձնական տվյալների առցանց անվտանգության ապահովման գործիքներ և տեխնիկա
Օր 2. Ապատեղեկատվության դեմ պայքար ֆ նախաձեռնությունների զարգացում **Մաս 2**	1. Ապատեղեկատվություն՝ սահմանումներ և համատեքստ (30 րոպե) ➢ Ապատեղեկատվության տեսակները ➢ Տեղեկատվական պատերազմների և արշավների համատեքստային օրինակներ 2. Քարոզչական մեխանիզմներ և տեխնոլոգիաներ (30 րոպե) ➢ Քարոզչության մեջ կիրառվող տեխնիկա ➢ Պատմական և ժամանակակից օրինակներ 3. ԶԼՄ-ներում ատելության և խտրականության դրդման նշաններ (30 րոպե) ➢ Ատելության խոսքի և խտրական բովանդակության բացահայտում ➢ Իրավական և սոցիալական արձագանքներ ատելության խոսքին 4. Ինչպես բացահայտել, խուսափել և ստուգել ապատեղեկատվությունն ու քարոզչությունը (30 րոպե) ➢ Կեղծ տեղեկությունների բացահայտման գործնական ռազմավարություններ

	➢ Ստուգման գործիքներ և տեխնիկա, փաստերի ստուգման հարթակներ ***Խմբային աշխատանք. փաստերի ստուգման գործիքների օգտագործում***
Մաս 2 (հրավիրված մասնագետների մասնակցությամբ)	5. Մեդիա և տեղեկատվական գրագիտության նորարարական մոտեցումներ (30 րոպե) ➢ Մեդիագրագիտության վերջին միտումներն ու նորամուծությունները ➢ Մեդիագրագիտության հաջողված ծրագրերի օրինակներ 6. Մեկ աշխարհ դպրոցներում (OWIS) մեդիագրագիտության ուսուցման նորարարական մեթոդիկա (1 ժամ) ➢ OWIS մեթոդաբանության ներածություն ➢ Վավերագրական ֆիլմերը՝ որպես մեդիագրագիտության բարձրացման գործիք ➢ Ինչպե՞ս մոտենալ վավերագրական ֆիլմերին քննադատական մտածողության զարգացման համար (վարժություններ և մոտեցումներ) 7. Քննադատական մտածողություն. հարցեր տալու և վերլուծելու արվեստը՝ OWIS-ի օրինակի վրա (30 րոպե) ➢ Քննադատական մտածողության հմտությունների զարգացում ➢ Վարժություններ հարցաքննության և վերլուծության մեջ ***Խմբային աշխատանք. Մեդիագրագիտության նախաձեռնությունների գաղափարների մշակում (1 ժամ)*** *Մասնակիցները կազմելու են ուղեղային գրոհի (brainstorming) խմբեր և մշակելու են իրենց մեդիագրագիտության նախաձեռնությունների գաղափարները՝ Լոռու մարզի երիտասարդների և մեծահասակների համար (փորձագետի ուղղորդմամբ)*
Օր 3. Նախաձեռնությունների ամփոփում ֆ ներկայացում (կես օր)	1. Նախագծերի լրամշակում՝ գաղափարների ճշգրտում (1 ժամ) ➢ Խմբերը կատարելագործում են իրենց նախագծային գաղափարները փորձագետի աջակցությամբ՝ հաշվի առնելով կայունության և ազդեցության չափորոշիչները: 2. Մշակված մեդիագրագիտության գաղափարների ներկայացումներ (1 ժամ) ➢ Յուրաքանչյուր խումբ ներկայացնում է նախաձեռնության իր գաղափարը:

	➢ Գործընկերների կարծիքը և փորձագետի մեկնաբանությունը: 3. Փակման խոսքեր և հաջորդ քայլերի ներակայացում (30 րոպե) ➢ Հիմնական ուսուցման ամփոփում ➢ Ապագա համագործակցության հնարավորություններ